

# Գործավարի արկածը

## հեղինակ՝ Արթուր Կոնան Դոյլ

### Թարգմանիչ՝ Հովհաննես Գեորգի Ղուկասյան

Ամուսնությունից անմիջապես հետո Պաղինգթոնում գնեցի բժիշկ Ֆարկերի բուժարանը: Ծերուկ բժիշկը մի ժամանակ բազմաթիվ այցելուներ է ունեցել, բայց հետո սուրբ Վիտոսի պարախտի նման հիվանդությամբ է տառապել, և այդ, ինչպես նաև ծերության պատճառով նրանց թիվը զգալիորեն պակասել է: Չէ որ մարդիկ, և դա հասկանալի է, գերադասում են բուժվել նրա մոտ, ով առողջ է, և քիչ են վատահում այն մարդու բժշկական գիտելիքներին, որը չի կարողանում բուժել անգամ ինքն իրեն: Եվ որքան վատանում էր վերջինիս առողջությունը, այնքան մեծ վնաս էր հասնում նրա բուժարանին, և այն պահին, երբ գնեցի, այն տարեկան բերում էր երեք հարյուր ֆունտից քիչ ավելի՝ նախկին երկու հարյուր հազարի փոխարեն: Բայց ես ապավինեցի երիտասարդությանս ու եռանդիս և չէի կասկածում, որ մեկ-երկու տարուց այցելուներից պրծնում չի լինի:

Առաջին երեք ամիսներին, երբ բնակություն հաստատեցի Պաղինգթոնում, շատ զբաղված էի և ոչ մի անգամ չհանդիպեցի ընկերոջս՝ Շերլոկ Հոլմսին: Ժամանակ չունեի գնալ Բեյքր-սթրիթ՝ նրա մոտ, իսկ նա, եթե որևէ տեղ էր դուրս գալիս, ապա միայն գործով: Այդ պատճառով էլ շատ ուրախացա, երբ հունիսյան մի առավոտ, նախաձաշից հետո «Բրիտանական բժշկական լրաբերը» կարդալիս, լսեցի նախասենյակի զանգը և դրան հաջորդող ընկերոջս կտրուկ ձայնը:

— Ա՛, իմ թանկագին Ուոտսոն, — սենյակ մտնելով ասաց նա, — ուրախ եմ ձեզ տեսնելու համար: Հուսով եմ, միսիս Ուոտսոնն արդեն ուշքի է եկել այն ցնցումից հետո, որ մեզ վիճակվեց ապրել «Չորսի նշանի» գործի կապակցությամբ:

— Շնորհակալ եմ, նա իրեն հիանալի է զգում, — ջերմորեն սեղմելով ընկերոջս ձեռքը, պատասխանեցի ես:

— Հուսով եմ նաև, բժշկությամբ զբաղվելը ձեր մեջ դեռ չի մարել հետաքրքրությունը մեր փոքրիկ հանելուկների հանդեպ, — նստելով ճոճաթոռին շարունակեց Շերլոկ Հոլմսը:

— Ընդհակառակը, — բացականչեցի ես: — Ոչ վաղուց, քան երեկ երեկոյան քրքրում էի հին գրառումներս, իսկ մի քանիսը նույնիսկ վերընթերցեցի:

— Հուսով եմ, ձեր հավաքածուն ավարտած չէք համարում:

— Իհարկե, ոչ: Շատ կցանկանայի դարձյալ լրացնել այն:

— Ասենք այսօ՞ր:

— Թեկուզ այսօր:

— Անգամ եթե հարկ լինի Բիրմինգեմ մեկնել:

— Ուր ցանկանաք:

— Իսկ բուժարա՞նը:

— Բուժարանը ի՞նչ: Կիսնդրեմ հարևանիս, նա կընդունի հիվանդներին: Չէ որ ես փոխարինում եմ նրան, երբ նա մեկնում է:

— Ահա և հիանալի է, — ասաց Հովմար, ետ ընկնելով ճոճաթոռին և կիսախուփ թարթիչների միջով վրաս նետելով խորաթափանց հայացքը: — Էհե՛, տեսնում եմ, հիվանդ եք եղել: Ամառվա մրսածությունը բավականին տհաճ երևույթ է:

— Ճիշտ եք: Անցյալ շաբաթ ուժեղ մրսեցի և ամբողջ երեք օր տանն էի: Բայց ինձ թվում էր, թե հիվանդությունից հետք անգամ չի մնացել:

— Դա ճիշտ է, դուք լիովին առողջ տեսք ունեք:

— Ինչպե՞ս կռահեցիք, որ հիվանդ եմ եղել:

— Իմ թանկագին Ուոտսոն, չէ որ դուք գիտեք իմ մեթոդը:

— Տրամաբանական մտահանգման մեթո՞դը:

— Իհարկե:

— Իսկ ինչի՞ց սկսեցիք:

— Ձեր տնային կոշիկներից:

Նայեցի ոտքերիս կաշվե կոշիկներին:

— Այս կոշիկներից ինչ..., — սկսեցի ես, բայց Հովման այդ հարցին պատասխանեց նախքան ես կավարտեի խոսքս:

— Ձեր կոշիկները նոր են, — բացատրեց նա: — Դուք այն հագնում եք մոտ երկու շաբաթ, իսկ ներբանները, որ հիմա ի ցույց դրիք, այրվել են: Սկզբում կարծեցի,

որ դրանք թրջել էք, իսկ հետո չորացնելիս այրել: Բայց հետո կրունկների մոտ նկատեցի խանութի կնիքով թղթե պիտակը: Հավանաբար, դրանք ջրից կտամկանային, եթե թրջելիք: Ուրեմն, նստել էք բուխարու մոտ, ձեր ոտքերը մոտեցրել էք կրակին. դժվար թե առողջ մարդն այդպես վարվեր, անգամ այս տարվա նման խոնավ ու ցուրտ ամռանը:

Ինչպես միշտ, Հովմսի բացատրությունից հետո ամեն ինչ շատ պարզ թվաց: Դեմքիս կարդալով այս միտքը, Հովմսը թախծոտ ժպտաց:

— Վախենում եմ, որ բացատրություններս ինձ միայն վնաս են բերում, — նկատեց նա: — Առանց պատճառի հետաքննությունները երևակայության վրա ավելի ուժգին ներգործություն են ունենեում... Դե, պատրաստ եք հետո Բիրմինգեմ մեկնելու:

— Իհարկե: Իսկ այնտեղ ի՞նչ գործ կա:

— Ամեն ինչ ճանապարհին կիմանաք: Ներքևում մեզ սպասում են կառքն ու այցելուն: Գնանք:

— Մի բուսե:

Հապճեպորեն հարևանիս երկտող խզբզեցի, վերև վազեցի, որպեսզի կնոջս նախազգուշացնեմ մեկնելուս մասին և սանդղամուտքին հասա Հովմսին:

— Ձեր հարևանն է՞լ է բժիշկ, — գլխով ցույց տալով հարևանիս դռան պղնձյա ցուցատախտակը հարցրեց նա:

— Այո, մեր բուժարանները միաժամանակ ենք գնել:

— Եվ այն վաղու՞ց գոյություն ունի:

— Այնքան, որքան և իմը: Այս շենքերը կառուցելու ժամանակից ի վեր:

— Դուք ավելի լավն եք գնել:

— Այո: Բայց ինչպե՞ս իմացաք:

— Աստիճաններից, իմ թանկագին Ուոտսոն: Ձեր աստիճանները ավելի շատ են մաշվել ներբաններից, ամեն մեկը երեք դյույմ ցածր է հարևանի աստիճաններից: Ահա և մեր այցելուն: Միստր Հոլլ Պիկրոֆտ, թույլ սովեք ձեզ ներկայացնել ընկերոջս՝ դոկտոր Ուոտսոնին, — ասաց Հովմսը: — Հեյ, կառապան, — ավելացրեց նա, — մտրակիր ձիերիդ, մենք ուշանում ենք գնացքից:

Ես տեղավորվեցի Պիկրոֆտի դիմաց: Անթերի կազմվածքով, լայն, բարեհոգի դեմքով և շեկ, ոլորուն բեղերով բարձրահասակ երիտասարդ էր նա: Շքեղ լայնեզր գլխարկով և կոկիկ սև կոստյումով, որը նրան Սիթիի նրբանկատ գործավարի տեսք էր տալիս, ինչպես և կար: Նա պատկանում էր այն մարդկանց դասին, որոնց մեզ մոտ կոչում են «կոկնի», բայց որոնք մեզ տալիս են այնքան հիանալի կամավոր զինվորներ, ինչպես նաև գերազանց մարզիկներ, որպիսիք չի տալիս անգլիական թագավորական ոչ մի դաս: Նրա կլորավուն, կարմիր դեմքը բնականից ուրախ էր, սակայն հիմա շրթունքների անկյունները կախ էին ընկել և թեթևակի ծիծաղաշարժ տեսք էին տալիս նրան: Թե ինչ փորձանք էր նրան բերել Շերլոկ Հոլմսի մոտ, իմացա, երբ տեղավորվեցինք առաջին կարգի վագոնում, և գնացքը շարժվեց:

— Եվ այսպես, — ասաց Հոլմսը, — մենք մեկ ժամից ավելի ազատ ժամանակ ունենք: Միստր Պիկրոֆտ, խնդրում եմ ընկերոջս պատմեք ձեր արկածի մասին, ինչպես պատմեցիք ինձ, իսկ եթե կարելի է՝ ավելի մանրամասն: Ինձ համար օգտակար կլինի մեկ անգամ ևս հետևել դեպքերի ընթացքին: Գործը, Ուոտսոն, կարող է չնչին լինել, բայց բավականին հետաքրքիր հանգամանքներ կան, որոնք երկուսս էլ այնպես սիրում ենք: Եվ այսպես, միստր Պիկրոֆտ, սկսեք: Այլևս ձեզ չեմ ընդհատի:

Մեր ուղեկիցը նայեց ինձ, և աչքերը բռնկվեցին:

— Այս պատմության մեջ ամենատհաճն այն է, — սկսեց նա, — որ այդտեղ ես կատարյալ ապուշի դերում եմ: Ճիշտ է, հնարավոր է, որ ամեն ինչ կարգավորվի: Ճիշտն ասած, այլ կերպ չէի էլ կարող վարվել: Բայց եթե այդտեղից էլ զրկվեմ՝ փոխարենը ոչինչ չստանալով, ապա դուրս կգա, որ ինձ նման ուրիշ ապուշ էլ չկա աշխարհում: Չնայած պատմելու վարպետ չեմ, բայց լսեք թե ինչ կատարվեց:

Ես ծառայում էի «Կոկսոն և Վուդհաուզ» բորսայական գործակալությունում, որը գտնվում է Դրեյպեր-Գարդենում, բայց այս տարվա գարնանը վենեսուելական փոխառությունը հողս ցնդեց, դուք, իհարկե, լսել եք այդ մասին, և գործակալությունը սնանկացավ: Բոլոր ծառայողներին՝ թվով քսանյոթ հոգու, հասկանալի է, ազատեցին: Նրանց մոտ աշխատել էի հինգ տարի, և երբ ամպրոպը պայթեց, ծերուկ Կոկսոնն ինձ փայլուն բնութագրի տվեց: Մկսեցի նոր տեղ փնտրել, այստեղ-այնտեղ դիմեցի, բայց ինձ նման դժբախտներ ամեն տեղ կային:

Դրությունը հուսահատական էր: Կոկսոնի մոտ շաբաթական ստանում էի երեք ֆունտ ստեռլինգ և հինգ տարվա ընթացքում կուտակեցի յոթանասուն ֆունտ, բայց դրամներն, ինչպես աշխարհում ամեն բան, վերջացան: Եվ ահա հասա այն աստիճանի, որ նույնիսկ ծրարների և դրոշմանիշների համար էլ փող չմնաց, որպեսզի հայտարարություններին արձագանքեի: Տարբեր գործակալությունների դռները մաշելով քրքրեցի բոլոր կոշիկներս, բայց աշխատանք գտնել չհաջողվեց:

Երբ արդեն հույսս բոլորովին կորցրել էի, լսեցի Լոմբարդ-սթրիթում գտնվող «Մեյսոն և Ուիլյամներ» մեծ դրամատան թափուր տեղի մասին: Համարձակվում եմ ենթադրել, որ դուք քիչ եք ծանոթ Լոնդոնի գործարար շրջաններին, բայց կարող եք հավատալ ինձ, որ դա ամենահարուստ և ծանրակշիռ դրամատներից մեկն է: Աշխատանքի առաջարկով կարող էի դիմել միայն փոստով: Առանց հաջողության հույսի, ուղարկեցի դիմումս բնութագրի հետ միասին: Եվ հանկարծ հետադարձ փոստով ստանում եմ պատասխանը, որ եկող երկուշաբթի կարող եմ ձեռնամուխ լինել նոր պարտականություններիս կատարմանը: Թե դա ինչպես կատարվեց, ոչ ոք չի կարող բացատրել: Ասում են, որ նման դեպքերում կառավարիչը ձեռքը մտցնում է դիմումների կույտի մեջ և բախտի բերամաբ հանում է առաջին իսկ ձեռքն ընկածը, ահա և բոլորը. բայց, այսպես թե այնպես, բախտս բերեց, և ես երբեք այնքան չեմ ուրախացել, ինչպես այս անգամ: Աշխատավարձն անգամ նրանց մոտ մեկ ֆունտով ավելի էր, իսկ պարտականությունները քիչ էին տարբերվում Կոկսոնի մոտ եղածից:

Հիմա մոտենում եմ իմ պատմության ամենահետաքրքիր մասին: Պետք է ձեզ ասեմ, որ բնակարան եմ վարձել Հեմստեդից այն կողմ՝ Փոթերս-սթրիթ, 17: Հենց այդ երեկո, երբ ստացա այդ հաճելի նամակը, տանը նստած ծխամորձ էի ծխում: Հանկարծ ներս մտավ տանտիրուհին և ինձ հանձնեց մի այցեքարտ, վրան գրված՝ «Արթուր Պիններ, ֆինանսական գործակալ»: Առաջներում նման բան երբեք չէի լսել և չէի պատկերացնում, թե ինչու եմ նրան պետք եկել, բայց և այնպես խնդրեցի տանտիրուհուն նրան վերև հրավիրել:

Ներս մտավ սև աչքերով, սև մորուքով, փայլուն քթով, թխահեր մի մարդ: Արագաքայլ էր, խոսակցությունը՝ կտրուկ, նման այն մարդուն, որը սովոր է դողալ ժամանակի վրա:

— Միստր Պիկրոֆտ, եթե չեմ սխալվում, — հարցրեց նա:

— Այո, սըր, — պատասխանեցի ես, աթոռ առաջարկելով:

— Առաջ աշխատել եք Կոկսոնի մոտ:

— Այո, սըր:

— Իսկ հիմա ընդունվել եք Մեյսոնների դրամատու՞նը:

— Միանգամայն ճիշտ է:

— Այդպես, — ասաց նա: — Գիտեք ինչ, լսեցի, որ դուք տիրապետում եք արտասովոր գործնական ընդունակությունների: Կոկսոնի նախկին կառավարիչը ձեզ շատ է գովել:

Լսելով իմ մասին գովասանական գնահատականը, իհարկե, շոյվեցի: Կոկսոնի մոտ միշտ հաջողությամբ եմ կատարել պարտականություններս, բայց մտքովս չի անցել, որ Միթիում այդպիսի խոսակցություններ են գնում իմ մասին:

— Դուք լա՞վ հիշողություն ունեք, — հարցրեց Պինները:

— Վատ չէ, — համեստորեն պատասխանեցի ես:

— Վերջին ժամանակներս հետևե՞լ էք արժեթղթերի ընթացքին:

— Անպայման: Ամեն առավոտ նայում եմ «բորսայական ամփոփագրերը»:

— Զարմանալի հավելված է, — բացականչեց նա: — Ահա թե որտեղ է ամեն ինչի հաջողության սկզբնաղբյուրը: Եթե չեք առարկում, ձեզ մի փոքր կքննեմ: Ասեք, ինչպիսի՞ն է Էյշիրյան արժեթղթերի կուրսը:

— Հարյուր հինգից մինչև հարյուր հինգ և քառորդ:

— Իսկ միացյալ նորգելանդականների՞նը:

— Հարյուր չորս:

— Լավ, իսկ Բրոքենհիլյան անգլիակա՞նը:

— Հարյուր յոթից մինչև հարյուր յոթ ու կես:

— Հիանալի է, — բացականչեց նա, — պարզապես սքանչելի է: Հենց այդպես էլ ձեզ պատկերացնում էի: Տղաս, դուք ստեղծված եք ավելի մեծ գործի համար, քան Մեյսոնների մոտ հասարակ գործավար լինելը:

Նրա հիացմունքը, ինչպես հասկանում եք, ինձ, իհարկե, մի փոքր շփոթեցրեց:

— Դա այդպես է, միստր Պիններ, — պատասխանեցի ես, — բայց բոլորն այդպիսի մեծ կարծիք չունեն իմ մասին: Ես շատ եմ վազվզել, մինչև գտել եմ այդ թափուր տեղը: Եվ շատ ուրախ եմ դրա համար:

— Ախ, աստված իմ, այդ ի՞նչ եք ասում: Մի՞թե դա ձեր տեղն է: Ճիշտ է, հիմա արդեն չեմ կարող ձեզ արժանի տեղ առաջարկել, բայց Մեյսոնների համեմատ սարի ու ձորի տարբերություն կա: Ե՞րբ եք սկսելու աշխատել Մեյսոնների մոտ:

— Երկուշաբթի:

— Հմ, կարող եմ ձեզ հետ գրագ գալ, որ այնտեղ չեք գնա:

— Ի՞նչ, չե՞մ գնա Մեյսոնների մոտ:

— Հենց այդպես, թանկագինս: Այդ ընթացքում դուք արդեն կաշխատեք Ֆրանկո-Միդլանդյան մետաղյա իրերի առևտրական ընկերության դիրեկտոր, որը Ֆրանսիայի տարբեր քաղաքներում և գյուղերում ունի հարյուր երեսունչորս բաժանմունք, չհաշված Բրյուսելն ու Սան Ռեմոն:

Նույնիսկ շունչս կտրվեց:

— Բայց ես երբեք չեմ լսել այդ ընկերության մասին, — քրթմնջացի ես:

— Շատ հնարավոր է: Մենք մեր մասին ամեն անկյունում չենք ճչում՝ գործակալության դրամագլուխն ամբողջովին կազմված է մասնավոր ներդրումներից, իսկ գործերն այնպես հաջող են գնում, որ ազդագիրը բանի պետք չէ: Գործակալության գլխավոր դիրեկտորը եղբայրս է՝ Հարրի Պինները, հենց նա էլ հիմնադրել է այն: Իմանալով, որ մեկնում եմ Լոնդոն, խնդրեց իր համար փնտրել լավ բնութագրով մի ճարպիկ երիտասարդ օգնական, ընդունակ ու գործնական: Պարկերն ինձ պատմեց ձեր մասին, և ահա ես այստեղ եմ: Սկզբի համար ձեզ կարող ենք առաջարկել տարեկան ընդամենը ինչ-որ հինգ հարյուր ֆունտ, իսկ հետագայում...

— Հինգ հարյուր ֆունտ, — բացականչեցի զարմացած:

— Դա սկզբի համար: Բացի այդ, ամեն մի նոր պայմանագրի համար կստանաք մեկ տոկոս միջնորդադրամ և կարող եք հավատալ ինձ, ձեր աշխատավարձը կկրկնապատկվի:

— Բայց ես ոչինչ չեմ հասկանում մետաղյա իրերից:

— Փոխարենը հասկանում եք հաշվապահությունից:

Գլուխս պտտվեց և հազիվ նստեցի տեղս: Բայց հանկարծ սիրտս կասկած սողոսկեց:

— Ձեզ հետ անկեղծ կլինեմ, սըր, — ասացի ես: Մեյսոններն ինձ համար տարին երկու հարյուր ֆունտ հատկացրին, բայց « Մեյսոն և Ուիլյամսներ » ֆիրման հաստատուն գործ է: Իսկ ձեր մասին համարյա ոչինչ...

— Ուղղակի հիանալի եք, — խանդավառությամբ բացականչեց նա: — Հենց այդպիսի մարդ էլ մեզ հարկավոր է: Ձեզ խաբել չի լինի: Եվ դա շատ լավ է: Ահա ձեզ հարյուր ֆունտ և եթե գտնում եք, որ գործն արված է, համարձակորեն դրանք դրեք ձեր գրպանը, իբրև կանխավճար:

— Սա շատ մեծ գումար է, — ասացի ես: — Ե՞րբ պետք է անցնեմ աշխատանքի:

— Վաղն առավոտյան մեկնեք Բիրմինգեմ, պատասխանեց նա: — Եվ ժամը մեկին եղեք գործակալության ժամանակավոր գրասենյակը, որը գտնվում է Կորպորեյշեն-սթրիթի հարյուր քսանվեց շենքում: Ձեզ կտամ եղբորս ուղղված նամակը: Հարկավոր է նրա համաձայնությունը: Բայց, մեր մեջ ասած, ձեր նշանակումը ես համարում եմ որոշված:

— Չգիտեմ ինչպես շնորհակալ լինեմ, միստր Պիններ, — ասացի ես:

— Դատարկ բան է, տղաս: Պետք է շնորհակալ լինեք միայն ինքներդ ձեզ: Իսկ այժմ ես մի երկու կետ, հենց այնպես, զուտ ձևականություն, բայց դա անհրաժեշտ է կարգավորել: Թուղթ ունե՞ք: Բարի եղեք գրել. «Համաձայն եմ ընդունվելու Ֆրանկո-Միդլանդյան մետաղյա իրերի առևտրական ընկերության դիրեկտորի պաշտոնում՝ տարեկան հինգ հարյուր ֆունտ աշխատավարձով»:

Գրեցի միստր Պինների թելադրածը, և նա թուղթը դրեց գրպանը:

— Մի հարց ես, — ասաց նա: — Ինչպե՞ս եք մտադիր վարվել Մեյսոնների հետ:

Ուրախություննից մոռացել էի նրանց մասին:

— Կգրեմ հրաժարվելու մասին, — պատասխանեցի ես:

— Իմ կարծիքով, դա պետք չէ անել: Ես եղել եմ Մեյսոնի մոտ և ձեր պատճառով վիճել եմ նրա կառավարչի հետ: Գնացի ձեր մասին տեղեկություններ հավաքելու, իսկ նա սկսեց գոռալ, որ ես գայթակղում եմ իր մարդկանց և նման բաներ: Դե, ես էլ ինձ չզսպեցի: «Եթե ցանկանուն եք լավ աշխատողներ պահել, նրանց վճարեք ինչպես հարկն է», — ասացի ես: Իսկ նա պատասխանեց, որ դուք կնախընտրեք իրենց մոտ աշխատել ցածր աշխատավարձով, քան մեզ մոտ՝ բարձրով:

«Հինգ ֆունտ կդնեմ, — ասացի, — որ երբ նրան մեզ մոտ առաջարկեմ առևտրական դիրեկտորի պաշտոն, ձեզ նույնիսկ չի գրի հրաժարականի մասին»:  
«Եղավ, — բացականչեց նա: — Կարելի է ասել, մենք նրան օղակից փրկեցինք և նա մեզնից չի հրաժարվի»: Սրանք ճիշտ նրա խոսքերն են:

— Ինչպիսի լկտիություն, — զայրացա ես: Ես նրան նույնիսկ չեմ տեսել, իսկ նա համարձակվում է այդպիսի բաներ ասել իմ մասին... Դե, ես հիմա ոչ մի դեպքում չեմ գրի նրանց, թեկուզ խնդրեք:

— Դե, հիանալի է: Ուրեմն, տվեք ձեր ձեռքը, — ասաց նա, ելնելով աթոռից: Ուրախ եմ, որ եղբորս համար լավ օգնական գտա:

Ահա ձեզ հարյուր ֆունտ, ահա և նամակը: Հիշեք հասցեն՝ Կորպորեյշեն-սթրիթ, 126: Չմոռանաք, վաղը ժամը մեկին: Բարի գիշեր, և թող երջանկությունը ուղեկցի ձեզ, որքան դրան արժանի եք:

Ահա, որքան հիշում եմ, այսպիսի խոսակցություն տեղի ունեցավ մեր միջև: Կարող եք պատկերացնել, դուկտոր Ուոտսոն, որքան ուրախացա այդ առաջարկից: Հուզված, մինչև կեսգիշեր չքնեցի փայլուն հեռանկարից և հաջորդ օրը առաջին գնացքով մեկնեցի Բիրմինգեմ: Ժամանելով, իրերս թողեցի Նյու-սթրիթի վրա գտնվող հյուրանոցում, իսկ հետո ոտքով ուղեվորվեցի նշված հասցեով:

Մինչև նշված ժամը մնում էր մոտավորապես քառորդ ժամ, բայց մտածեցի, որ ոչինչ չի պատահի, եթե շուտ գնամ: Հարյուր քսանվեց շենքը պարզվեց, մեծ առևտրասրահ էր, որի երկու ծայրերում կային երկու մեծ խանութներ, մեկի ետևից երևում էր պտուտակաձև աստիճանը, ուր բացվում էին տարբեր գրասենյակների ու տեղական գործակալական բաժանմունքների դռները:

Ներքևում աստիճանների սկզբում, պատից կախված էր գործակալությունների անվանումների մեծ ցուցատախտակը, բայց որքան էլ փնտրեցի, «Ֆրանկո-Միդլանդյան» այնտեղ չկար: Միքտս նվաղեց, և մի քանի ընդհանուր կանգնեցի ցուցատախտակի մոտ՝ բութ հայացքով նայելով դրան և ինքս ինձ հարցնելով, ով և ինչու մտածեց ինձ հետ այսպիսի անհեթեթ խաղ խաղալ, երբ հանկարծ ինձ մոտեցավ մի անծանոթ՝ ճիշտ իմ երեկվա այցելուի կրկնօրինակը, միայն թե սա մաքուր սափրված էր, և մազերն էլ մի փոքր բաց գույնի էին:

— Միստր Պիկրոֆտ, — հարցրեց ինձ:

— Այո, — պատասխանեցի ես:

— Ձեզ սպասում էի, բայց դուք մի փոքր շուտ եկաք: Այսօր առավոտյան ինձ հանձնեցին եղբորս նամակը: Նա ձեզ շատ է գովում:

— Ես ցուցատախտակի վրա փնտրում էի իմ ապագա ֆիրման, երբ մոտեցաք:

— Առայժմ ցուցատախտակ չունենք, մենք միայն անցյալ շաբաթ ենք վարձել այս շենքը: Դե ինչ, գնանաք վերև, հենց այնտեղ էլ կխոսենք:

Աստիճաններով բարձրացանք համարյա տանիքի տակ և հայտնվեցինք դատարկ ու կեղտոտ, քարուքանդ ու տակնուվրա մի սենյակում, որտեղից դուռ էր բացվում դեպի նույնատիպ մի այլ սենյակ: Հույս ունենալով տեսնել մեծ գրասենյակ՝ փայլուն սեղանների շարքով և բազմաթիվ գործավարներով, ես շժմած նայեցի գալարավարագույրներից կամ վարագույրներից զուրկ մերկ պատուհաններին, սոճու փայտից պատրաստած երկու նստարաններին և փոքր սեղանին, որոնք համրիչի և թղթի զամբյուղի հետ միասին կազմում էին ամբողջ կահավորանքը:

— Միստր Պիկրոֆտ, թող ձեզ չշփոթեցնի մեր համեստ սենյակը, — ինձ ոգևորեց նոր պետս, նկատելով ձգված դեմքս, — Հռոմը միանգամից չի կառուցվել: Մեր գործակալությունը բավականին հարուստ է, մենք մեր դրամները քամուն չենք տալիս: Խնդրում եմ նստեք և տվեք ձեր նամակը:

Մեկնեցի նամակը, որը նա ուշադրությամբ կարդաց:

— Օ՛, դուք ուժեղ տպավորություն եք թողել եղբորս՝ Արթուրի վրա, — նկատեց նա: — Իսկ եղբայրս խորաթափանց մարդ է: Նա մարդկանց չափում է լոնդոնյան չափանիշներով՝ իսկ ես բիրմինգեմյան: Բայց այս անգամ կհետևեմ նրա խորհրդին: Այսօրվանից ձեզ համարեք մեր գրասենյակում ծառայության ընդունված:

— Որո՞նք են լինելու իմ պարտականությունները, — հարցրեցի ես:

— Դուք շուտով պիտի ղեկավարեք մեր ընկերության Փարիզի մեծ մասնաճյուղը, որը Ֆրանսիայում ունի երեսունչորս բաժանմունք և անգլիական կերամիկան պետք է տարածի երկրով մեկ: Առևտրական պատվերների ձևակերպումը ավարտվում է մոտ օրերս: Իսկ մինչ այդ կմնաք Բիրմինգեմում և ձեր գործը պետք է այստեղ անեք:

— Հասկապես ի՞նչ, — հարցրեցի ես:

Պատասխանի փոխարեն նա գգրոցից հանեց կարմիր կազմով մեծ գիրքը:

— Սա Փարիզի տեղեկագիրքն է, — ասաց նա, — նրա բնակիչների զբաղմունքների նշումներով: Դա տուն տարեք և արտագրեք մետաղյա իրերի վաճառքով զբաղվող բոլոր առևտրականների անունները՝ իրենց հասցեներով: Դա մեզ ծայրաստիճան անհրաժեշտ է:

— Բայց չէ որ, հավանաբար, մասնագիտությունների հատուկ տեղեկագրեր կան, — նկատեցի ես:

— Դրանք շատ անհարմար են: Ֆրանսիական համակարգը տարբերվում է մերից: Մի խոսքով, վերցրեք այս տեղեկագիրքը և հաջորդ երկուշաբթի ժամը տասներկուսի կողմերը ինձ բերեք պատրաստի ցուցակը: Մինչ նոր տեսություն, միստր Պիկրոֆտ: Հավատացած եմ, որ ձեզ դուր կգա այստեղ, եթե, իհարկե, դուք այսուհետև էլ ողջամիտ և հնարամիտ լինեք:

Գիրքը ձեռքիս վերադարձա հյուրանոց. հոգումս ամենահակասական զգացմունքներ էին փոթորկում: Մի կողմից ինձ վերջնականապես ընդունել էին աշխատանքի և գրպանումս կար հարյուր ֆունտ: Մյուս կողմից՝ գրասենյակի խղճալի տեսքը, ցուցատախտակի բացակայությունն ու այլ մանրուքներ, որոնք անմիջապես նկատում էր դրամատան գործերին լավ ծանոթ մարդու աչքը, ստիպում էին ինձ

մտածել նոր տերերիս ֆինանսական վիճակի մասին: Ինչ լինում է թող լինի, կանխավճարը ստացել եմ, պետք է գործի անցնել: Ամբողջ կիրակի ջանասիրաբար աշխատեցի, Բայց և այնպես երկուշաբթի օրը հասա միայն «Ն» տառին: Ուղևորվեցի նոր պետիս մոտ և նրան գտա այն նույն խարխլված սենյակում: Նա ինձ հանձնարարեց շարունակել փարիզյան թիթեղագործների ցուցակը արտագրել և պատրաստի աշխատանքով ներկայանալ չորեքշաբթի օրը: Բայց չորեքշաբթի օրն էլ աշխատանքը չէի ավարտել: Ցուցակների վրա տքնեցի մինջև ուրբաթ, այսինքն մինջև երեկ երեկո: Վերջապես երեկ Պիններին տարա պատրաստի ցուցակը:

— Շնորհակալ եմ, — ասաց նա: — Վախենում եմ, որ չգնահատեցի աշխատանքի դժվարությունը: Այս ցուցակը ինձ շատ օգտակար կլինի:

— Այո, դրանց վրա ստիպված էի բավականին քրտնել, — նկատեցի ես:

— Իսկ այժմ, — հայտարարեց նա, — կլինդրեի ձեզ կազմել կահույքի խանութների ցուցակը, նրանք ևս զբաղվում են կերամիկայի վաճառքով:

— Լավ:

— Վաղը երեկոյան ժամը յոթին եկեք գրասենյակ, որպեսզի իմանամ, թե ինչպես են գնում գործերը: Բայց մի ծանրաբեռնվեք: Երեկոյան գնացեք երաժշտական սրահ: Կարծում եմ, դա չի խանգարի ձեզ և ոչ էլ ձեր աշխատանքին:

Այս ասելով նա քմծիծաղեց, և ես, ի սարսափ ինձ, հանկարծ նկատեցի նրա՝ ներքևի ձախից երկրորդ աստամի ոսկյա վատ աստամնալիցքը:

Շերլոկ Հոլմսը հաճույքից նույնիսկ ձեռքերը շփեց, իսկ ես մեր այցելուին լսում էի տարակուսանքով:

— Ձեր տարակուսանքը հասկանալի է, դոկտոր Ուոտսոն, — ասաց Պիկրոֆտը: Դուք պարզապես չգիտեք գործի հանգամանքները: Հիշո՞ւ՞մ եք, Լոնդոնում խոսեցի տիրոջս եղբոր հետ: Ուրեմն այսպես, նրա բերանում ճիշտ այդպիսի աստամնալիցք կար: Դրա վրա ուշադրություն դարձրեցի այն ժամանակ, երբ նա ծիծաղելով ինձ պատմեց Մեյսոնի կառավարիչի հետ ունեցած իր խոսակցությունը:

Այդ ժամանակ ես մտովի համեմատեցի երկու եղբայրներին և տեսա, որ նրանց ձայներն ու մարմնի կառուցվածքը բացարձակապես նույնն են, և իրարից տարբերվում են միայն նրանով, ինչը կարելի է փոխել ածելիի և կեղծամի միջոցով: Անտարակույս, իմ առջև այն նույն մարդն էր, որը Լոնդոնում եկել էր ինձ մոտ: Բիարկե, պատահում է, որ երկու եղբայրներ ջրի երկու կաթիլի պես նման են լինում, Բայց որ նրանք ունենան աստամնալիցքով հենց նույն աստամը՝ դա չի կարող պատահել:

Պետս գլուխ տալով ինձ, ուղեկցեց մինչև դուռը, և ես հայտնվեցի փողոցում, հազիվ գլխի ընկնելով, թե որտեղ եմ և ինչ է կատարվում ինձ հետ:

Մի կերպ հյուրանոց հասա և ուշքի գալու համար գլուխս մտցրի սառը ջրով լի կոնքի մեջ և սկսեցի մտածել, ինչու՞ ինձ Լոնդոնից ուղարկեց Բիրմինգեմ՝ իր մոտ, ինչու էր գրել այդ հիմար նամակը: Որքան էլ գլուխ կտորեցի, այդ հարցերի պատասխանը չգտա: Հանկարծ գլխի ընկա՝ մեկնել Շերլոկ Հոլմսի մոտ. միայն նա կարող է հասկանալ, թե բանն ինչ է: Հենց նույն երեկոյան ուղևորվեցի Լոնդոն, որպեսզի առավոտ վաղ տեսակցեմ Շերլոկ Հոլմսի հետ և նրան Բիրմինգեմ բերեմ:

Գործավարը վերջացրեց իր զարմանալի արկածի պատմությունը: Լռություն տիրեց: Շերլոկ Հոլմսը բազմանշանակ նայեց ինձ և հենվեց բարձին: Դեմքին գոհ և միաժամանակ տագնապալի արտահայտություն կար, այն գիտակի պես, որը հենց նոր էր համտես արել մի կուս հիանալի գինի:

— Դե ինչ, Ուոտսոն, ճարպիկ է մտածված, չէ՞, — նկատեց նա: — Այս պատմության մեջ ինձ համար ինչ-որ գայթակղիչ բան կա: Հուսով եմ, կհամաձայնեք, որ Ֆրանկո-Միդլանդյան մետաղյա իրերի ընկերության ժամանակավոր գրասենյակում հարցազրույցը Հարրի-Արթուր Պինների հետ հետաքրքիր կլինի:

— Այո, բայց դա ինչպե՞ս անել, — հարցրի ես:

— Շատ հասարակ, — խոսակցությանը խառնվեց Հոլլ Պիկրոֆտը: — Դուք երկուսով իմ բարեկամներն եք, աշխատանք եք փնտրում, և ես, բնականաբար, որոշեցի ձեզ ներկայացնել տիրոջս:

— Գերազանց է, այդպես էլ կանենք, — բացականչեց Հոլմսը: — Ցանկանում եմ հանդիպել այդ պարոնին, և եթե հաջողվի, պարզել, թե ինչ խաղ է ձեռնարկել: Հատկապես ի՞նչ է գտել ձեր մեջ: Ինչու՞ է այդքան մեծ կանխավճար տվել: Կարող է պատահել...

Բացակայող հայացքը հառելով պատուհանին, Հոլմսը սկսեց եղունգները կրծել և մինչև Նյու-սթրիթ մեզ այլևս չհաջողվեց նրանից մի խոսք կորզել:

\* \* \*

Հենց այդ նույն օրը, երեկոյան ժամը յոթին մենք երեքով քայլում էինք Կորպորեյշեն-սթրիթով դեպի Ֆրանկո-Միդլանդյան գրասենյակ:

— Շուտ գնալու անհրաժեշտություն չկա, — նկատեց գործավարը: —  
Հավանաբար, նա այստեղ է լինում միայն ինձ հետ տեսակցելու համար: Այնպես որ,  
մինչև նշանակված ժամը, միննույն է, գրասենյակում ոչ ոք չի լինի:

— Դա հետաքրքիր է, — ասաց Հովմար:

— Դե, ձեզ ինչ էի ասում, — բացականչեց Պիկրոֆտը: — Ահա նա գնում է մեր  
առջևից:

Նա մատնացույց արեց ոչ բարձրահասակ, շիկահեր, լավ հագնված մի  
տղամարդու, որը շտապում էր փողոցի մյուս կողմով: Մինչ նայում էինք նրան,  
Պինները, տեսնելով թերթ վաճառողին, որը թափահարում էր երեկոյան թարմ թերթը,  
փողոցը հատելով նետվեց դեպի նա՝ շրջանցելով երկտեղանի կառքերն ու  
հանրակառքերը, և գնեց մեկը: Հետո թերթը ձեռքին ծածկվեց առևտրասրահի դռների  
ետևում:

— Նա արդեն գրասենյակում է, — բացականչեց Պիկրոֆտը: — Գնանք  
միասին, ձեզ հիմա կներկայացնեմ:

Մեր ուղեկցի ետևից մեծ դժվարությամբ բարձրացանկ հինգերորդ հարկ և  
հայտնվեցինք չկողպված դռան դիմաց: Պիկրոֆտը դուռը թակեց: Դռան ետևից լսվեց.  
«Մտեք»:

Մտանք դատարկ, համարյա չկահավորված մի սենյակ, որի տեսքը  
համապատասխանում էր Պիկրոֆտի նկարագրությանը: Միակ սեղանի ետևում,  
բացված թերթը ձեռքին նստած էր այն մարդը, որին հենց նոր էինք տեսել փողոցում:  
Նա բարձրացրեց գլուխը, և ես տեսա դեմքը՝ տանջալից աղավաղված, ավելի ճիշտ,  
նույնիսկ ոչ թե տանջալից, այլ անելանելի հուսահատությունից, ինչպես լինում է, երբ  
մարդու գլխին անուղղելի փորձանք է գալիս: Ճակատը փայլում էր քրտինքից,  
այտերն ստացել էին մահացու դալուկ երանգ, որը հիշեցնում էր փորը պատռած  
ձկան, անկենդան հայացքը խելագարի հայացք էր: Աչքերը հառեց իր գործավարին,  
ասես առաջին անգամ էր տեսնում, և Պիկրոֆտի հայացքից հասկացա, որ նա իր  
տիրոջն այսպես տեսնում է առաջին անգամ:

— Միստր Պիններ, ի՞նչ է պատահել, հիվանդ ե՞ք, — բացականչեց նա:

— Այո, ինչ-որ լավ չեմ զգում, — մեծ դժվարությամբ հառաչեց Պինները: — Այս  
ի՞նչ ջենտլմեններ են եկել ձեզ հետ, — ավելացրեց նա, լիզելով չորացած  
շրթունքները:

— Մա միստր Հարրիսն է՝ Բերմենդսից, իսկ սա միստր Փրայսն է՝ տեղացի, —  
վրա տալով պատասխանեց մեր գործավարը: — Ընկերներս են: Նրանք լավ գիտեն

գրասենյակային գործը: Բայց հիմա երկուսն էլ անգործ են: Եվ ես մտածեցի, որ գուցե ձեզ մոտ նրանց համար էլ տեղ գտնվի:

— Իհարկե, ինչու՞ չէ, — գոչեց Պինները դժվարությամբ ժպտալով: — Ես նույնիսկ հավատացած եմ, որ կգտնվի: Ի՞նչ մասնագիտություն ունեք, միստր Հարրիս:

— Հաշվապահ եմ, — պատասխանեց Հոլմսը:

— Այդպես, այդպես, հաշվապահներ մեզ պետք են, իսկ ձեր մասնագիտությունը, միստր Փրայս:

— Ես գործավար եմ:

— Ենթադրում եմ, որ ձեզ համար էլ գործ կգտնվի: Հենց որ որոշում ընդունենք, անմիջապես ձեզ իմաց կտանք: Իսկ այժմ, խնդրում եմ ձեզ, գնացեք: Աստծո սիրուն, ինձ մենակ թողեք:

Վերջին խոսքերը դուրս թռան անկախ իր կամքից: Ուղղակի նա այլևս ուժ չունեի իրեն պահելու: Ես ու Հոլմսը հայացքներ փոխանակեցինք, իսկ Պիկրոֆտը գնաց դեպի սեղանը:

— Միստր Պիններ, դուք հավանաբար մոռացել եք, որ այստեղ եմ եկել հետագա կարգադրությունների համար, — ասաց նա:

— Այո, այո, իհարկե, միստր Պիկրոֆտ, — հանկարծակի անտարբեր տոնով պատասխանեց գրասենյակի տերը: Մի բոպե ինձ այստեղ սպասեք: Դե, ձեր ընկերներն էլ թող սպասեն: Ձեր տրամադրության տակ կլինեմ հինգ բոպեից, եթե թույլ տաք այդքան չարաշահելու ձեր համբերությունը:

Նա վեր կացավ, քաղաքավարի գլուխ տվեց, անցավ հարևան սենյակն ու իր ետևից ծածկեց դուռը:

— Ի՞նչ է պատահել, — շշնջաց Հոլմսը, — նա չի՞ ծլկի:

— Ոչ, — վստահ պատասխանեց Պիկրոֆտը, — այս դուռը տանում է միայն երկրորդ սենյակը:

— Իսկ այնտեղ ուրիշ էլք չկա՞:

— Ոչ:

— Այնտեղ է՞լ է դատարկ:

— Համենայն դեպս, երեկ այնտեղ ոչինչ չկար:

— Ինչու՞ այնտեղ գնաց: Այստեղ ամեն ինչ չէ, որ ինձ հասկանալի է: Այնպիսի տպավորություն է, ասես Պինները վնասել է ուղեղը: Գիտակցությունը կորցնելու աստիճան ինչ-որ բան վախեցրեց նրան: Բայց ի՞նչ:

— Հավանաբար, որոշեց, որ մենք ուստիկանությունից ենք, — ենթադրեցի ես:

— Հնարավոր է, — համաձայնեց Պիկրոֆտը:

Հովմար տարուբերեց գլուխը:

— Ոչ, երբ ներս մտանք, արդեն մահվան պես գունատ էր, — առարկեց նա: — Գուցե միայն...

Նրա խոսքն ընդհատվեց հարևան սենյակից եկող կտրուկ հարվածներից:

— Գրողը տանի, ինչու՞ է նա ծեծում իր սեփական դուռը, բացականչեց Պիկրոֆտը:

Հարվածները չդադարեցին: Մենք բոլորս սպասողական հայացքներս հատեցինք փակ դռանը: Հովմարի դեմքը խստացավ: Նա խիստ գոգոժած հակվեց առաջ:

Հետո հարևան սենյակից լսվեց կլկլացող ձայն, կարծես մեկը կոկորդն էր ողողում, և ինչ-որ բանով հաճախ թմբկահարում էին փայտյա միջնորմին: Հովմար խենթի պես թռավ դեպի դուռը և հրեց այն: Պարզվեց, որ դուռը փակ էր: Ես ու Պիկրոֆտը նույնպես նետվեցինք դեպի դուռը և երեքս միասին, ամբողջ ուժով ընկանք նրա վրա: Պռկվեց մի ծղիւնի, հետո երկրորդը, և դուռն աղմուկով տապալվեց գետնին: Մենք խուժեցինք ներս: Սենյակը դատարկ էր:

Մեր շփոթվածությունը տևեց րոպեից ոչ ավելի: Սենյակի մոտիկ անկյունում երևաց մի դուռ ևս: Հովմար նետվեց դեպի այն և թափով բացեց: Դռան ետևում, հատակին, ընկած էին բաճկոնն ու պիջակը, իսկ կեռիկից, սեփական տաքատակալով կախված էր Ֆրանկո-Միդլանդյան մետաղյա իրերի ընկերության կառավարիչը: Ծնկները ծալվել էին, գլուխն անբնական ձևով հակված էր կրծքին, կրունկները խփելով դռանը, հանում էին հենց այն անհասկանալի թխթխկոցը, որը ստիպեց մեզ զգուշանալ: Մի ակնթարթում ես գրկեցի ու բարձրացրի նրա անզգայացած մարմինը, իսկ Հովման ու Պիկրոֆտը սկսեցին քանդել ռետինե օղակը, որը համարյա կորել էր վզի մուգ կապտավուն ծալքերում: Հետո Պիններին տեղափոխեցինք մյուս սենյակն ու դրեցինք հատակին: Դեմքը կապարամոխրագույն էր, բայց նա ողջ էր, և նրա կապտամանուշակագույն շրթունքներն ամեն շնչելուց և արտաշնչելուց ուռչում էին և սմքում: Դա ընդամենը կես ժան առաջ փողոցում մեր տեսած առողջ, ծաղկուն մարդու խղճուկ նմանակն էր:

— Ինչպե՞ս է նրա վիճակը, Ուոտսոն, — հարցրեց Հոլմսը:

Խոնարհիվեցի փոված մարմնի վրա և սկսեցի քննել: Չարկերակը առաջվա նման թույլ էր, բայց շնչառությունն աստիճանաբար համաչափ էր դառնում, կոպերը թեթևակի դողում էին, կիսաբաց անելով ակնախորշի նուրբ, սպիտակ շերտը:

— Քիչ էր մնում գնար իր նախապապերի մոտ, — նկատեցի ես, — բայց թվում է, ամեն ինչ հաջող անցավ: Հապա բացե՞ք պատուհանը և ինձ տվե՞ք ջրամանը:

Քանդեցի վերնաշապիկը, սառը ջրով թրջեցի դեմքն ու արհեստական շնչառություն տալով, սկսեցի բարձրացնել և իջեցնել ձեռքերը, մինչև որ նա սկսեց ողջ կրծքով շնչել:

— Հիմա մնացյալը կախված է ժամանակից, — նետեցի ես՝ հեռանալով նրանից:

Հոլմսը կանգնել էր սեղանի մոտ, ձեռքերը մտցրած տաբատի գրպաններն ու գլուխը կրծքին խոնարհած:

— Դե ինչ, — ասաց նա, — ժամանակն է ոստիկանություն կանչելու: Պետք է խոստովանեմ, որ ինձ հաճելի կլինի նրանց իրազեկ դարձնել այս գործի մանրամասներին:

— Այնուամենայնիվ, ոչինչ չեմ հասկանում, — խոստովանեց Պիկրոֆտը՝ քորելով ծոծրակը: — Գրողը տանի: Հարց է առաջանում, ինչի համար էի ես նրանց այստեղ հարկավոր:

— Ամեն ինչ շատ պարզ է, — ձեռքը թափ տվեց Հոլմսը, — ինձ անհասկանալի է միայն եզրափակիչ տեսարանը: — Հոլմսը ցույց տվեց տաբատակալները:

— Իսկ մնացած ամեն ինչ հասկանալի՞ է:

— Կարծում եմ, այո: Իսկ դուք, Ուոտսոն, ի՞նչ կասեք:

Ես թոթվեցի ուսերս:

— Պարզապես ոչինչ չեմ հասկանում:

— Բայց եթե ուշադրությամբ հետևեք իրադարձությունների ընթացքին, ապա եզրակացությունն առաջանում է ինքնաբերաբար:

— Ինչպիսի՞:

— Մի բույս: Նախ վերադառնանք երկու սկզբնակետերին. առաջին՝ Պիկրոֆտի դիմումը, որով խնդրում էր իրեն ընդունել աշխատանքի այս անհետեթ ընկերությունում: Հուսով եմ, դուք գուշակեցիք, թե ինչու՞ նրան ստիպեցին գրել այս դիմումը:

— Վախենում եմ, որ ոչ:

— Եվ, այնուամենայնիվ, դա ինչ-որ բանի համար պետք էր: Չէ՞ որ, սովորաբար, մարդուն ծառայության ընդունելու համար բավական է բանավոր համաձայնությունը. և այս անգամ էլ ոչ մի հարկ չկար բացառություն անելու: Այստեղից հետևություն. նրանց չափազանց պետք էր ձեր ձեռագիրը:

— Բայց ինչու՞:

— Իսկապես, ինչու՞: Այդ հարցին պատասխանելով մենք միասին կլուծենք ողջ խնդիրը: Այսպես ուրեմն, ինչի՞ համար նրանց պետք եկավ ձեր ձեռագիրը: Այն պատճառով, որ ինչ-որ մեկին հարկավոր էր կեղծելով ձեր ձեռագիրը, ինչ-որ բան գրել: Իսկ այժմ՝ երկրորդը: Ինչպես հիմա կտեսնեք, մեկը լրացնում է մյուսին: Հիշում եք, թե ինչպես միստր Պիկրոֆտից խոսք էին վերցրել, որ հրաժարվելու համար Մեյսոններին գրավոր հրաժարական չուղարկի, և այստեղից հետևում է, որ հիշյալ բանկի կառավարիչը մինչև այսօր հավատացած է, որ երկուշաբթի օրն իր մոտ ծառայության է ներկայացել ոչ այլ ոք, քան միստր Պիկրոֆտը:

— Աստված իմ, — բացականչեց խեղճ Պիկրոֆտը, — ինչ հիմարն եմ եղել:

— Հիմա վերջնականապես կհասկանաք, թե ինչի համար է նրանց պետք եկել ձեր ձեռագիրը: Պատկերացրեք, որ ձեր անունով Մեյսոնների մոտ հայտնված մարդը չգիտե ձեր ձեռագիրը: Պարզ է, նրան անմիջապես տեղում կճանկեն, և նա խաղը դեռ չսկսած, տանուլ կտա: Բայց եթե սրիկան ծանոթ է ձեր ձեռագրին, ապա նա ոչնչից վախ չունի: Քանի որ, որքան հասկացա, Մեյսոնների մոտ ձեզ ոչ ոք չի տեսել:

— Բանն էլ այն է, որ ոչ ոք, — հառաչեց Պիկրոֆտը:

— Հիանալի է: Այնուհետև սրիկաների համար ծայրաստիճան կարևոր էր, որպեսզի դուք չմտափոխվեիք կամ պատահաբար չիմանայիք, որ Մեյսոնների մոտ աշխատում է ձեր կրկնակը: Դրա համար ձեզ տվեցին պատկառելի կանխավճար և ուղարկեցին Բիրմինգեմ, որտեղ այնպիսի աշխատանք տվին, որը թեկուզ մեկ շաբաթով ձեզ հեռու պահեր Լոնդոնից: Ինչպես տեսնում եք, ամեն ինչ շատ պարզ է:

— Այո, բայց ինչու՞ նրան պետք եկավ իրեն ներկայացնել եղբոր տեղը:

— Դա էլ է հասկանալի: Նրանք, հավանաբար, երկուսն են: Մեկը պետք է ձեզ փոխարիներ Մեյսոնների մոտ, մյուսը՝ ձեզ ուղարկեր Բիրմինգեմ: Ֆիրմայի

կառավարիչի դերում հրավիրել երրորդին՝ նրանց ցանկալի չէր: Դրա համար երկրորդը, որքան կարող էր, փոխեց իր արտաքինը և իրեն ներկայացրեց իր եղբոր փոխարեն, այնպես որ, նույնիսկ զարմանալի նմանությունը չէր կարող կասկած առաջացնել: Եվ եթե ոսկե աստամնալիցքը չլիներ, երբեք գլխի չէիք ընկնի, որ ձեր լոնդոնյան այցելուն և բիրմինգեմյան գրասենյակի կառավարիչը միննույն անձնավորությունն է:

Հուլ Պիկրոֆտը սկսեց թափահարել սեղմած բռունցքները:

— Աստված իմ, — բացականչեց նա: — Իսկ ինչով էր զբաղվում կրկնակս, մինչ ես թույլ տվեցի, որ այստեղ քթիցս բռնած ինձ ման ածեն: Իսկ հիմա ի՞նչ անենք, միստր Հոլմս: Ի՞նչ:

— Նախ և առաջ, առանց հապաղելու հեռագրենք Մեյսոններին:

— Այսօր շաբաթ է, դրամատունը փակվում է տասներկուսին:

— Դա կարևոր չէ, այնտեղ, հավանաբար, պահակ կամ դռնապան կա...

— Այո, նրանք հատուկ պահակներ են պահում: Այդ մասին ինչ-որ ժամանակ խոսում էին Սիթիում: Նրանց դրամատանը մեծ արժեքներ են պահվում:

— Հիանալի է: Հիմա կգանգահարենք և նրանցից կիմանանք, թե ամե՞ն ինչ է այնտեղ կարգին և ձեր անունով գործավարը աշխատո՞ւմ է արդյոք: Մի խոսքով, գործը պարզ է: Պարզ չէ միայն մի բան. ինչու՞ մեզ տեսնելով սրիկաներից մեկը գնաց մյուս սենյակ և կախվեց:

— Թերթը... — մեր ետևից լսվեց խոպոտ մի ձայն:

Իքնասպանը, գունատ ու զարհուրելի, նստել էր հատակին, աչքերում գիտակցության կայծեր էին հայտնվել, ձեռքերը նյարդայնորեն շփում էին վզի վրա օղակից մնացած լայն կարմիր հետքը:

— Թերթը: Դե, իհարկե, — զայրացած բացականչեց Հոլմսը: — Ինչ հիմարն եմ ես: Ինքնասպանությունը ամեն ինչով ցանկանում էի կապել մեր այցի հետ և բոլորովին մոռացել էի թերթի մասին: Առեղծվածի լուծումն անկասկած թերթի մեջ է: — Նա սեղանին փռեց թերթը, և հաղթական ճիչը դուրս թռավ նրա շուրթերից:

— Նայեք, Ուոտսոն, — բացականչեց նա: — Սա լոնդոնյան «Իվնինգ ստանդարտն» է: Ինչպիսի՞ վերնագրեր: «Կողոպուտ Սիթիում: Սպանություն Մեյսոնների գանձատանը: Կողոպուտի ահռելի փորձ: Հանցագործը բռնված է»: Ահա այստեղ, Ուոտսոն: Կարդացեք: Ես պարզապես այրվում եմ անհամբերությունից:

Դատելով նյութին՝ թերթում հասկացված ծավալից, այս անհաջող կողոպուտը օրվա գլխավոր իրադարձությունն էր:

Ահա թե ինչ կարդացի:

«Այսօր ցերեկը Սիթիում կատարվել է դրամատան կողոպուտի հանդուգն փորձ: Սպանված է մեկ մարդ: Հանցագործը բռնված է:

Մի քանի օր առաջ «Մեյսոն և Ուիլյամսներ» հայտնի դրամատունն ի պահ ստացավ ավելի քան մեկ միլիոն ֆունտ ստեռլինգի արժեթղթեր: Դրամատան կառավարիչը գիտակցելով իր ուսերին ընկած պատասխանատվությունն ու հասկանալով այդպիսի մեծ գումարի պահպանման վտանգը, դրամատանը սահմանեց զինված պահակների շուրջօրյա հերթապահություն: Ստացված արժեթղթերը տեղադրված էին ամենավերջին տեսակի չիրկիզվող պահարանում: Այդ ժամանակ դրամատանը ծառայության էր ընդունվել Հոլլ Պիկրոֆտ անունով մի նոր գործավար, որը, պարզվեց, ոչ այլ ոք էր, քան հռչակավոր կողոպուտիչ Բեդինգթոնը, որը հինգ տարի տաժանավայրում անցկացնելուց հետո իր եղբոր հետ օրերս ազատվել էր: Դեռ չի բացահայտված, թե ինչպես և ինչ ձևով էր այդ Բեդինգթոնին հաջողվել դրամատանը տեղավորվել որպես գործավար: Մի քանի օր աշխատելով, նա ուսումնասիրել էր պահեստների և չիրկիզվող պահարանների դասավորությունը, ինչպես նաև հանել էր իրեն հարկավոր բանալիների պատճենները:

Սովորաբար շաբաթ օրը Մեյսոնների աշխատակիցները բանկից դուրս են գալիս ցերեկվա ժամը տասներկուսին: Ահա թե ինչու ոստիկանության սերժանտ Տյուսոնը, հերթապահելով Սիթիում, փոքր ինչ զարմացած էր, երբ տեսավ ուղեպայուսակը ձեռքին ինչ-որ պարոնի, որը դրամատանից դուրս եկավ մեկն անց տասներկու րոպեին:

Վատ բան կասկածելով, նա հետևեց անձանթին և մոլեգին դիմադրությունից հետո բռնեց նրան՝ օգնության հասած ոստիկան Պոլակի օգնությամբ: Անմիջապես պարզ դարձավ, որ տեղի է ունեցել հանդուգն և խոշոր գողություն: Պարզվեց, որ ուղեպայուսակը բերնեբերան լցված էր Ամերիկյան երկաթգծի և ուրիշ ընկերությունների արժեթղթերով: Թղթերի գումարը գերազանցում էր հարյուր հազար ֆունտ ստեռլինգից: Շենքը գննելու ժամանակ հայտնաբերեցին դժբախտ պահակի դիակը, որը խցկված էր ամենամեծ չիրկիզվող պահարաններից մեկը, ուր պառկած կմնար մինչև երկուշաբթի, եթե չլիներ սերժանտ Տյուսոնի ուշիմությունն ու ճարպկությունը:

Խեղճի գանգը ջնջված էր ետևից հասցրաց կրակխառնիչի հարվածով: Հավանաբար, Բեդինգթոնը ետ էր դարձել գրասենյակ, ձևացնելով, թե այնտեղ ինչ-որ բան է մոռացել: Սպանելով պահակին և արագ մաքրագարդելով ամենամեծ չիրկիզվող պահարանը, փորձել էր իր ավարով թաքնվել: Նրա եղբայրը, որ

սովորաբար հետն էր աշխատում, այս անգամ, ինչպես առայժմ հայտնի է, այս գործին չի մասնակցել: Բայց ոստիկանությունը տենդագին միջոցներ է ձեռնարկում, որպեսզի պարզի նրա կացությունը»:

— Մենք, ըստ երևույթին, կարող ենք ոստիկանությանն ազատել ավելորդ հոգսից, — ասաց Հովմարը՝ հայացք նետելով պատուհանի մոտ կծկված, խուճապահար, կռացած կերպարանքին: — Մարդկային էությունը տարօրինակ բան է, Ուոտսոն: Այս մարդն այնպես է սիրում իր եղբորը՝ մարդասպանին և չարագործին, որ պատրաստ է ձեռք բարձրացնել իր վրա, իմանալով, որ եղբորը կախաղան է սպասում: Բայց ոչինչ չես կարող անել: Մենք կմնանք այստեղ, իսկ դուք՝ միսոր Պիկրոֆտ, բարի եղեք գնալ ոստիկանության ետևից: